

### ՔԱՂՈՒԱՅՆՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳԻՐԵՐԻՑ

Սինոդը՝ լսելով Վաղարշապատի վերաբնակչուհի հրե-  
ուհի Պերել Զայդամանի խնդիրը՝ մկրտելու իրեն Հայաս-  
տանեայց եկեղեցւոյ ծիսով և ի նկատի առնելով բժշկա-  
կան վկայութիւնը նրա՝ Զայդամանի վասնեզաւար հիւան-  
դութեան մասին՝ հրահանգուելով XI հատ. I մ. 7 յօդ-  
յաւել. 1, 2 և 8 կ. Ռոսեց. պատու իրել Երևանի Կոնսիս-  
տորիային ընդունել Հայ եկեղեցւոյ ծոցը հրեուհի Պերել  
Զայդամանին, պահպանելով հրեաների մկրտութեան համար  
սահմանուած կարգը: 1 յուլիսի, Թ. 261:

Սինոդը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի 1912 Թ.  
ապրիլի 12-ի № 1956 յայտարարութեան հետ ներկայա-  
ցրած Բաշապարանի ծխատէր Խաչատուր քահանայ Տէր  
Ներսիսեանի մեղադրական գործը՝ սրբեց. ի նկատի առ-  
նելով Տէր Ներսիսեան քահանայի տարիների ընթացքում  
կատարած մի շարք սպօրինութիւնները, աթոռահաս  
պահադրամների իւրացումը, հաստատել Երևանի Կոնսիս-  
տորիայի եղրակացութիւնը, կարգալոյծ անելով յիշեալ  
քահանային, իսպառ զրկելով նրան հոգևոր կոչումից, իսկ  
ինչ վերաբերում է նրա կատարած կրկնամուսնութեան,  
պատու իրել Կոնսիստորիային այդ առթիւ կատարել քննու-  
թիւն և արդիւնքը ներկայացնել ի սնօրէնութիւն Սինոդի:  
3 յուլիս, Թ. 264:

Սինոդը՝ ի նկատի առնելով Վլադիկաւկազի ծխատէր  
Յակոբ քահանայ Սառիկեանի խնդիրը, իր հիւանդութեան  
պատճառով ազատ համարելու պատերազմի հարաւ-արե-  
մտեան բեմի հայ զինւորների հոգևոր պէտքերը կատա-  
րելուց, սրբեց. հիմնուելով նրա ներկայացրած բժշկական  
վկայականի վրայ, յետ կոչել պատերազմի հարաւ-արե-  
մտեան բեմից Սառիկեան քահանային, որի մասին յայտ-  
նել նոյն բեմի զօրարանակների մատակարարութեան զըլ-  
խաւոր պետին և Աստրախանի Կոնսիստորիային: 6 յուլիսի,  
Թ. 268:

Սինոդը լսելով Երևանի Կոնսիստորիայի միջնորդութիւն Իսաակնի գաւառի Մատաշաթ գիւղի բնակչուհի Քրքուհի Սոնա Մամօ գղուն իր որդի նահապիժի հետ Հայաստանեայց եկեղեցւոյ զիրկն ընդունելու մասին, որոշեց, համաձայն XI հատ. I մ. 11 յօդ. և 1141 յօդ. 16 կ. թող տալ Երևանի Կոնսիստորիային ընդունել Աղէքսանդրապօլի գաւառի Ելիսիարի գիւղի վերաբնակչուհի Սոնա Մամօ գղուն իր միամեայ որդու հետ Հայաստանեայց եկեղեցւոյ զիրկը: 13 յուլիս, թ. 273:

Սինոդը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի սոյն թուի մայիսի 27-ի № 1998 յայտարարութիւնը, Սուրմալուի գաւառի Ալիդամար գիւղի բնակիչ Մերկերիոս Ղաղիմեանին նոյն գիւղի վերայ քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց, թող տալ Երևանի Կոնսիստորիային հոգևոր կազման մէջ ընդունելու Ալիդամար գիւղի բնակիչ Մերկերիոս Ղաղիմեանին և առաջադրել փոխ-Քեմակային ձեռնադրել յիշեալ Ղաղիմեանին քահանայ նոյն գիւղի համար:

Սինոդը լսելով Վեհափառ Հայրապետի տարւոյս յուլիսի 27-ի № 1238 կանոնակր, որոշեց, համաձայն նորին Արքութեան վերայդրեալ կանոնակր պատուիրել Տ. Մուշէ վարդապետին յանձնել Տպարանի վարչութեան նախագահի պաշտօնը Տ. Արսէն վարդապետին, իսկ Զանգուի առուի շինութեան յանձնաժողովի նախագահի պաշտօնը, առձեռն դրամը և դրամական բոլոր հաշիւները՝ Տ. Մատթէոս եպիսկոպոսին, պատուիրելով Մ. Աթոռի գանձապահին կարծելու Տ. Մուշէ վարդապետի մարանական ուճիկը և անդադրամը այս տարուայ օգոստոսի 1-ից, պատուիրելով Բեասարիայի Առաջնորդին տալ Մուշէ վարդապետին ձանապարհաժախք ո. Էջմիածնից մինչև ո. Խաչ վանքը նոյն վանքի եկամուտների հաշուից, 27 յուլիսի, թ. 299:

